ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ամուրա ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/142 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
4	մանկական խաղա հրապարակների սարքեր	Վանդալակայուն սղարան։ Դիմացկուն է UV ճառագայթման, ջերմաստիճանի փոփոխությունների և խոնավության նկատմամբ։ Շրջանակի և սղարանի մետաղական տարրերի մշակումը պետք է բացառի ժանգի առաջացումը։ Շրջանակը և ամրացման համակարգը պետք է կանխեն սղարանի շրջվելը մարդկանց ազդեցության հետևանքով։ Չափեր 8.19 մ × 1.2 մ × 2.33 մ Նյութեր Սղարանը պատրաստվում է հղկված չժանգոտվող պողպատից։ Պողպատի հաստությունը՝ 3 մմ։ Մետաղական թիթեղների միացման հատվածները պետք է նախագծվեն այնպես, որպեսզի բացառվի՝ • սղարանի վրա կանգ առնելու հնարավորությունը, • մատների, փոքր առարկաների, հագուստի մասերի կամ աղբի սեղմվելը, • նույնիսկ փոքր վնասվածքների առաջացումը։ Միացման հատվածները նաև չպետք է տեսողականորեն առանձնանան սղարանի մակերեսից։ Կողային եզրեր Կողային եզրերի բարձրությունը՝ • մեկնարկային հարթակում -700 մմ • սահքի և արգելակման հատվածներում -150 մմ Կողային եզրերը տեղադրվում են սղարանի մակերեսի նկատմամբ ուղղահայաց։ Եզրերի արտաքին անկյունների կլորացման շառավիղը՝ առնվազն 3 մմ։ Պաշտպանիչ ձող Պաշտպանիչ ձողը տեղադրվում է մեկնարկային հատվածի մակերեսից 700 մմ բարձրության վրա։ Պատրաստվում է պողպատե խողովակից՝ տրամագիծ 30 մմ։ Շրջանակ Շրջանակը պողպատե է։ Կառուցվածքը

		պետք է ապահովի անվտանգությունն ու կայունությունը օգտագործման ընթացքում։ Շրջանակը պատվում է խեժափայտով (լարխ)։ Փայտը պետք է՝ • լինի լավ հղկված, • բացառի կտրվածքների և փշերի առաջացումը, • մշակված լինի թափանցիկ մատե խոնավակայուն նյութերով (յուղ կամ լաք), • մշակված լինի հակասեպտիկ նյութով։ Արտաքին անկյունների վրա պետք է իրականացվի եզրերի հարթեցում (ֆազկա)։ Պարիսպ Պարիսպը բաղկացած է՝ • ցինկապատ պողպատե շրջանակից՝ • խողովակ d = 30 մմ Ներկում՝ ըստ նախագծի գույնի Կարմիր 1։ Լցոնումը՝ բարակ մետաղական ցանց (ռաբիցա)՝ ռոմբաձև բջիջներով։ Ցանցի ստորին ամրացումը իրականացվում է ամրանային մետաղալարով։ Ցանցի և փայտե մակերեսի միջև բացը՝ 60 մմ։ Տեղադրում Սղարանը պետք է հուսալիորեն ամրացված լինի մակերեսին, սակայն առանց մեծ խորությամբ հողի մեջ տեղադրման։ Ապրանքը պետք է մատուցվի նախատեսված ծավալներին համապատասխան, պետք է լինի համաձայն կից ներկայացվող լուսանկարում, ինչպես նաև տեխնիկական բնութագրում ներկայացված տեսակի, բնութագրի, չափսերի, լինի չօգտագործված։ Օգտագործված բոլոր նյութերը և սարքավորումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին, ինչպես նաև ապրանքների որակավորման և պարամետրային ցուցանիշներին։ Փոխադրումը և տեղադրումը կատարվում է մատակարարի կողմից։ Երաշխիքային ժամկետը՝ 12 ամիս։ Անվտանգության և համապատասխանության հավաստագրերը արտադրողի կնիքով պետք է ներկայացվեն ապրանքը առաքելիս։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Амура ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/142 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
4		